



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՇՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂԱՎՈՅՑ

ՔԱՅԱԼԻ 1884 ԱՎՐԱ

ԵՒՍ Ե.

22 ՅՈՒՆԻՍ 1884



Կ. ԳԵՂԵՆ

ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

1884

ԴԻՒԱՆՔ ՍՀԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄՍՅՐ ԴԻՒԱՆ

Տիգրան	Լիքէնտի	Եռուսուֆեան	Ա. Արևելու
Քրիստոսառուլ	»	Ղաղարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յովհաննէս	»	Արշակունի	Ա. Արևելու
Յակոբ	»	Պօջնակեան	Բ. »

Ձեռնասութեան Գիւան

Մատթէոս Եսկ. Խզմիրեան Արևելու
Գալեգին Վրդ. Թաթարեան
Մարկոս Լիքէնտի Աղարէդեանց

Դաստիարակութեան Գիւան

Աէթէոս Լիք. Պէրէրեան Արևելու
Գէորգ. » Ապառւլահ
Միքայէլ. » Մամիկոնեան

Կալուածոց Գիւան

Քրիստոս. Լիք. Ղաղարոսեան Արևելու
Յակոբ » Եէմէնիճեան
Պօղոս » Թորդոմեան

Համարակարութեան Գիւան

Կաղապեա Լիք. Աըլամեան Արևելու
Մկրտիչ » Ճանըմեան
Գառնիկ » Յովլակիմեան

Յարաբերութեան Գիւան

Յովհաննէս Լիք. Թորոսեան Արևելու
Ռուբէն » Պուլկութեան
Վիչէն » Օրմանեան

Իրաւասութեան Գիւան

Յովհաննէս Քէյ. Մկրեան
Յակոբ Լիքէնտի Արշակ
Գարըիհէլ » Նորատունկեան

Նախանձեռնութեան Գիւան

Մինաս Լիքէնտի Զերալ Արևելու
Յովհաննէս » Արշակունի
Նշան » Պօյաճեան

Խմբագրութեան Գիւան

Հաբարձում Լիքէնտի Ալաճաճեան
Յակոբ » Պուրդէն.
Կորապեա » Խթիճեան.

վաւերայնել այս ընտրութիւնը, պատրաստ եմ սիրով և յօժարութեամբ կատարել իմ վրաս դրուած պարաւականութիւններն :

Հաճեցէք, Դերապատիւ Տէր, ընդունիլ խորին մեծարանաց հաւասարիքն Արքիար Արքիարեան

42 ՅՈՒՆԻՍ 1884

Կ. Պոլիս

(Յէտ ընթերցնան)

ԳՈՒՐԳԻՆ Յ. ԷՖ. — Երաւ է թէ Բաղէջին երեսիումանական ընտրութեան տեղեկացիրն տակեց առաջնագույն ներկայացուած էր, սակայն ի նմա սրարունակեալ ինչ ինչ օրինական թերութեանցն պատճառաւ վերապարձուած էր առ Վարչութիւն յաւզանցին : Ասկայն, չեմ յիշեր թէ ո՞յց էին այդ թերութիւններն, և կը խնդրեմ Դիւանէն յիշեցնել մեղ զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. Ֆ. — Եղելութիւնն այս է Ասկէց առաջ թէ և այդ տեղեկացիրն ժողովոց ներկայացուած, սակայն նշանակուած շինելով Քաղէջի Գաւառական ժողովոյ անդամոց ճիշդ թիւն, վերադարձուած էր առ Վարչութիւն : Այսօր տեղեկացիրն այդ թերին ամբողջացն ինելով կրկնի մեջ կը ներկայանայ, որ կրնայ վաւերել ժողովի, եթէ ուրիշ զիտողութիւն չ'ունի :

ԴԱԶԱՐՈՒՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Երբ նախորդ Դիւանի Ատենապետ) Անցեալ Ամսանին մէջ էր որ այդ տեղեկացիրն մեղ եկաւ, սակայն որոշ նշանակուած շինելով, ոչ Գաւառական ժողովոյ նախագուհին պաշտօնն և ոչ ալ անդամոց ճիշդ թիւն, հարդ եղաւ այս թերութիւններն ամբողջացնել տալու համար վերադարձնել Վարչութեան : Այսօր քանի որ հա-

մաճայն Ժողովոյ օրոշման թերին լրացած է, ըսել է կատարեալ է:

ԹԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եւ ոչ իսկ պէտք կայ նախորդ տեղեկացիրն թերութիւնքն այժմ խնդիր ընել տաս : Այսօր Ժողովս իւր տաջեւոնի առ վրացած տեղեկացիրն և պէտք է վաւերացնել զայն :

ԳՈՒՐԳԻՆ Յ. ԷՖ. — Ես ո՛չ ընտրելոյն արժանեաց վրայ զիտողութիւն ունիմ և ո՛չ ալ ուրիշ նկատումներով է որ կը խօսիմ :

ՄԵՆՔ յահձնարարած էինք Վարչութեան որ հրահանգ տայ Բաղէջի Գաւառական ժողովոյն իւր տեղեկացիրն սոյս ինչ կոմը այն ինչ թերութիւններն ճշկել և ըստ այնով վերադարձնել զայն մեզ : Սակայն Գաւառական ժողովն փոխանակ մեր սրոշութիւն գործադրելու , վերատին ընտրութեան գեւանարկեր է : Կրնար ըլլալ որ այս նոր ընտրութեան պահուն փոխանակ նախորդ ընտրեալին, մի այլ որ ընտրութիւն, որով թէ նախառայն ընտրեալ երեսիումին զրկանք մը եղած կը նել և թէ մեր որոշման հակառակ գործ մը կատարուած :

ԹԱԴԱՌՈՒՍԵԱՆ Ռ. Է.Ֆ. — Կը կրկնեմ Գուրգին էֆինսութիւններն :

ԱՏԵՆԱՊԵՏ Տ. Է.Ֆ. — Եթէ սոյն տեղեկացիրն վրայ որիշ դիտողութիւն ունեցած չ'կայ, ժողովոց քուէին պիտի ենթարկեմ զայն :

Ոչ որ յերեսիումանաց խօսք ուղելով, Ատենապետ էֆինսութիւնների կը գնէ, Բաղէջի երեսիումանական ընտրութեան օրինաւորութիւնն որ Կը նկատուի միաձանութեամբ :

Հետեւաբար Ատենապետ էֆինսութիւն Բաղէջի Գաւառէն աղջային երեսիուման կը չը մը գակէ :

Արփիար է Փէնտի Արփիարեան

Սյն քու էարկութեան մէջ ձեռնպահ կը
մեան Արշակունի Յովհաննէս և Պէրպէրեան
Ռէթէս է Փէնտիք :

5.

Հարցագիր Ելիկողոս էն. Թիւլպենոնեանի

Ատենապետ է Փէնտի Ժողովին կը հաղոր-
դէ Թիւլպէնոնեան նիկողոս է Փէնտիք կող-
մանէ ներկայացեալ հետեւեալ հարցագիրն :

Հարցագիր

Առ Ազգ. Կեդր. Գարզութիւն .

Ստորյգ է որ՝ Ամենայն Հայոց Հայ-
րապետի ընտրութեան առթիւ և յայդմ
միջոցի՝ Վանայ, Մշոյ, Տաղէշի, Երզն-
կայի, Տրապիզոնի, Վերջապէս մի քանի
Գաւառաց հայ ժողովութեան կողմանէ
պաշտօնական մարմինք և կամ մասնա-
ւոր պատուիրակը դրաւոր թէ հեռադը-
րաւ ուղղակի հաղորդակցութիւն և յա-
րաբերութիւն ունեցեր են իշխանայ
Սինօդին և Համագումար ընտրողական
ժողովոյ հետ :

Եթէ ստոյգ է ո՞վ իրաւունք և ար-
տօնութիւն տուեր է յիշեալ դաւառաց՝
Կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն
մէջ ուղղակի յարաբերութեան և հա-
զորդակցութեան մէջ մտնել օտար երկ-
րի մը պաշտօնական մարմնոց հետ, յա-
րաբերութիւն մը՝ որ մեր Ազգային Սահ-
մանագուրութեան օրինաց գծած շաւդէն
յայտնի խոտորում և դարտուղութիւն

մէջ, յարաբերութիւնք՝ յորս օտար Տէ-
րութեանց պաշտօնակատարք և Հիւպա-
տոսք իսկ առիթ ունեցած են իւրեանց
յատուկ գերը կատարելու :

Մանաւորապէս փափաքելի է դիտ-
նալ թէ Կաթողիկոսական ընտրութեան
խնդրոյ առթիւ օտարասահման պաշտօ-
նական մարմնոց հետ Թուրքիոյ մի քա-
նի հայ Առաջնորդական վիճակաց պաշ-
տօնական մարմնոց ունեցած ույն օրի-
նակ ապօրէն յարաբերութիւններն ի՞նչ
կերպիւ և տեսութեամբ նկատած է Ազգ.
Կեդր. Պատկառելի Վարչութիւնն, և ի՞նչ
միջոցներ ձեռք առած է այդպիսի օրի-
նազնացութիւնները արգիլելու համար :

Ազգային Երեսփոխան

Նիկողոսոս Մ. Թիւլպենոնեան

22 Յունիս 1884

Կ. Պոլիս

Փողովք ստաջարկութեամբ Դիւանի ԿՈ-
ՐՈՇԵ ույն հարցագիրն ՅՂԻԼ տու Վարչութիւն
ի նկատառումն :

6.

Հարգումն Յ. Գորգեն Լ.Ֆ. ի ի մասին
բացս կառեան երեսփոխանաց և ծանօթու-
թիւնը ի դիւանէ Յ. Մէրեւմ—Գորգի հժենտիք
երեսփոխանական խնդրոն առթիւ :

ԳՈՒՐԳԵՆ Յ. Լ.Ֆ. — Կաթողիկոսական
ընտրութեան վերջն նիստէն ի վեր կը տես-
նեմթէ Փողովք նուազ անդամներով ի նիստ
կը գումարի : Կան կարգ մը երեսփոխանք,
զորս յականէ յանուանէ չ'եմ ուղեր յիշել,
որ Կ-Յ բացակայութիւն ունեցած են յա-
շըրդարար . կարծես թէ Կաթողիկոսական

խնդիրը վերջացած լինելով, այլ եւս հարկ և պէտք չ'կայ իրենց՝ ժողովոյ առվորական նվաճերուն ներկայ գանձիկէ Զեմ զիսեր թէ ոյսականաց համար մեր ներքին կանոնագրի արաւագրութիւնք ի գործ զրուած են թէ ոչ եթէ ց'արդ չեն զրուած, առ այս Գիւանին ու շաղբութիւնն կը հրամիեմ և կ'առաջարկեմ որ այդ երեսփոխանաց մի ցուցակն պատրաստելով ժողովոյս յառաջիկայ նատին ներկայել բարեհամարք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ժողովոյս նր շրջանէն Գ. բացակայութիւն ունեցող երեսփոխանաց մի ցուցակն պատրաստած է Գիւանս, զոր պիտի ներկայէ Զեզ յ'աւարտ նատին ինչպէս նաեւ Գ. բացակայից անուանքն, որոց մամանոր կօշնագիր պիտի յզուի, յաջորդ նատին համար: Աթէ մեր պաշտօնակիցը թիշ մը համրելութիւն ունենան, փորձազ պիտի տեսնեն թէ Գիւանս փոյթ կ'ընէ շարժիւ իւր պաշտօնին բնութեան համաձայն :

ԱԼԻՔԱՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Կան նաեւ երեսփոխաներ ալ որոց անուանն առջեւ միցն Բ. գիրն զրուած է. չեմ գիտեր թէ այս Բ. ը բանի՞րորդ բացակայութիւն կը նշանակէ վասպն զի կան կարգ մը երեսփոխաներ որը երեկար ժամանակէ ի վեր բացակայ մինելով կանելուած է:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՅ. — Ալիքասանեան Էֆէնտիփութեան ՚ի պատասխան, կուգամ յայտնել թէ՝ ըստ օրինի, բացման նատին մէջ երեսփոխանաց նախորդ ըրջանէն ունեցած բացակայութիւնը կը ջնջուին, և անոնք որ նախորդ ըրջանէն 3—4 բացակայութիւն ունեցած էն, առաջի նիստին սկսեալ իր առաջին բացակայ կը նկատուին :

Այս առթիւ հարկ կը համարիմ յայտնել նաեւ թէ՝ մեր մէջ կան երեսփոխաներ ալ, որք նատի բացումէն առաջ, վերը Մատենա-

դարան երեներգ ներկայութեան Ցետրին մէջ իւրենց անունն կ'սորորագրեն ու կը մեկնին, իսոյ տաղը համոր Գ. բացակայութենէ, ինչպէս որ ըլրած է՝ Թարգմանեան Պոյոս էֆէնտին, որ մեկ օց առաջ եկած և իւր անունն սոսրագրած է ներկայութեան Տումարին մէջ. թէեւ ես Առենաղպրութեան իրաւացրու ջնջել տուփ այդ անունն, նկատելով զայն մի վեցդում։ Բարերագպարար այս պարուգան մեր ու շաղբութենէն ըստ վրիպեցաւ այս անգամ և կրցանը ճշգել ուրեմն կրնանք հետեւցնել թէ ուրիշ անգամներ ալ պատահած ըլլան այս կարգի անուղղութիւններ, որոց պատասխանատութիւնը արգի Գիւանիս վրայ ծանրացնել արդոր չ' :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Օրուկարգի երկրորդ խնդրայն չ'անցած, կուգամը յայտնել թէ նախորդ նատի մէջ, Մէրեէմ-Գուլի էֆէնտիի երեսփոխանական խնդրայն մասին ևս ժողովացդ կողմանէ Գիւանիս եղած յանձնարուրութեան համեմատ, հորի եղած քննութիւնն կատորութէ : Մէրեէմ-Գուլի էֆէնտի նախագննեաց շրջանին մէջ իւր երեսփոխանական պաշտօնէն հրաժարական տուած է, որ իրը թիւրիքինցացութեան արգիւնք՝ ժողովը մերժելով զայն, վերաբն հրաւիրեր է դնա ի պաշտօն։ Խոկ Մէրեէմ-Գուլի էֆէնտի յայտներ է թէ երր նայն շրջանի Առենաղպրութիւնը ըստ տեսնեն, յայնուամ ոլուի հաստատուի թէ իւր հրաժարական թիւրիքացութեան արգիւնք է թէ ոչ Ահա խնդրին այս վիճակին մէջ իւրենական և միանդամայն նոյն շրջանի Առենաղպրութիւնը հրաժարական դութիւնն է և ոչ այն պէս Մէրեէմ-Գուլի էֆէնտի ոչ իւր պաշտօնն շարունակած է և ոչ ալ իւր հրաժարականին վրայ պնդած։ Շատի եթէ ժողովք պատշաճ կը գտափ իրնայ յանձնարարէ Գիւանիս, որ պատշաճ եղած եղանակու բանակցելով Մէրեէմ-Գուլի էֆէնտիի հետ, հրափերէ դիմում համարկալի ժողովայս կամաց և վերասանձնել իւր երեսփոխանական պաշտօնը :

Ժողովն համակերպելով Ատենապետ է.
Քէնտիֆի առաջարկութեան, ըստ այնմ կը
յանձնէ Մայր-Դիւմին մերսոին հրատիրել
զՄերեւմ—Գուլի Յարութիւն էֆէնտի յաթու
երեսփոխանական :

7

Հայուեցոյց 1883-84 ամաց տղզայն
Կեդրոնական սնտուկի և Տեղեկագիր Վար-
չուրեան :

Աեղբոնական սնտուկի 1883-84 ամաց
Հայուեցուցակն հանդերձ Վարչական պաշտօ-
նագրով աւանդուած լինելով Մայր-Դիւմին,
Ատենապետ էֆէնտի հրատիրանոք Ատենա-
դպիր էֆէնտի կընթեռնու զոյնո :

Վաեմափայլ Ատենապետ էֆէնտի
Ազգ. Երեսփոխանական ժողովոյ .

Ազգային Վարչութեան Ծնտեսա-
կան Խորհուրդն ներկայացուցած լինելով
կեդր. սնտուկի նախորդ՝ 83—84 սահմա-
նագրական տարւոյ Հայուեցոյցն, Քաղ-
ժողովն կը փութայ Պատ. Ժողովոյց հա-
յորդել զայն իւր յարակից տեղեկագր-
րով, որ պէտք եղած բացադրութիւննե-
րըն կը պարունակէ :

Մնամք յարդանօք

Ի դիմաց Ազգ. Վարչ. Քաղ. Ժողովոյ
Ատենապետ

Ս. Մարտունեան

21 Յունիս 1884

Կ. Պոլիս

Ամենապատիւ Մըրազան Պատրիարք
Հայու Նախագահ Ազգ. Քաղ. Ժողովոյ

Ազգային Վարչութեան Ծնտես. Խոր-
հուրդն՝ իւր սահմանադրական պարտա-
ւորութեան համաձայն՝ կը փութայ ա-
հաւասիկ կեդր. սնտուկին նախորդ՝ 1883

— 1884 տարւոյ Հայուեցոյցն ներկայել
Պատ. Ժողովոյց, ինչպէս մատուցած է
արդէն ներկայ տարւոյ Ելմուցոյցն :

Սոյն հաջուեցոյցին առաջին մասէն
կը տեսնուի որ, 1882—83 Սահմանա-
դրական տարւոյն վերջն, կեդր. մնտու-
կըն ունեցած էր 363,702, 35 դուրուց
պարտք եւ 1,107,437, 20 զուրուշ պա-
հանջ, որմէ 743,734, 35 զուրուշի յա-
ւելեալ շահ մը յառաջ կուգար. իսկ
նախընթաց 83—84 տարւոյ մէջ հասոյթ
կերեւի 471,640 87 1/2 դր. և 434,797
37 1/2 ծախք, որով կը գոյանայ դարձ-
եալ 36,843, 75 դր. յաւելեալ շահ մը,
որ բարդուելով նախորդ՝ 82—83 տար-
ւոյ յաւելեալ շահուց գումարին վրայ՝
կը կազմէ 780 578, 35 զուրուչ :

Այլ սակայն էապէս կեդր. մնտու-
կին վիճակն տարրեր է ասիէ, ինչպէս
ցոյց կուտայ հայուեցոյցին գումարը, և
փոխանակ նուռազեալ տեսնուելու ներ-
կայ տարւոյ պարտուց գումարն, աւելի
սուռարացած և յանդած է 382,960
47 1/2 դուրուշի, նոյն շրջանի հասոյթնե-
րըն և գլխաւորաբար մուգաթայ և քան-
չելը անուն տուրքերն ամբողջովին ըլ-
կրնալ գանձուելուն պատճառաւ :

Ծնտեսական Խորհուրդն Պատ. Ժո-
ղովոյ ուշադրութիւնը կը հրատիրէ այս
պարտուց վիճակին վրայ, վամն զի պար-
տուց գումարին 153,783 72 1/2 դրն. կը
բարկանայ հին տարիներէ մնացորդ-
պարտքերէ, որք մեծ մասամբ մնուա-
նական են և չնելի, իսկ մնացեալ 229,
176 73 դրը. վճարելի պարտուց գումար
մէ՛, և այս գումարին 22,093 78 դրը.
անցեալ տարւոյ մէջ յաւելցած է, և եթէ
կեդր. մնտուկին մուգաթայի 473,426

դրշի. պահանջման՝ որոյ 385,776 զրչն-նախորդ տարիներէ և 87,650 զրչն անցեալ տարւոյ մէջ գոյացեալ է, գէթ կիսովին գանձուէր, այս պարտքը գոյութիւն չ'ափտի առնուր :

Բաց ՚ի սոյն պահանջմի գումարէն, քանչէրի տրոց հաշուէն մայրաքաղաքիս թաղերէն 56,047 ½ դրշի. քանակութեամբ պահանջը մ'ալ կայ, որոյ 37,130 զրչն հին տարիներու, և 13,497 ½ դրչն, անցեալ տարւոյ մէջ գոյացեալ է :

Հաշուեցայցին մէջ կը տեսնուի նաև 629 333 զրչն. հին տարիներէ մնացորդ պահանջից ստուար գումար մը, որ ինչպէս նախորդ ծնտես. Խորհուրդներն դիտել տուած են բազմիցս, մեծ մասամբ փառւն են, և այսպէս պիտի Էլլայ նաև կերպյնշանակեալ մուգաթաթայ և քանչէր անուն տուրքերէն գոյացեալ մեծաքանակ պահանջմն, եթէ անսոնց գանձմանը մասին զօրաւորագոյն միջոցներ ՚ի դործ չ'դրուին :

Այս վիճակն էր ահաւասիկ, որ պարաւարեց զլորհուրդա կեդր, սնտուկի ներկայ տարւոյ Ելմտից մատակարարութեան մէջ ինայոյութիւններ ՚ի դործ գնել, և այս սկզբամբ պատրաստել Ելմտացոյցն, որ բնականաբար կը տարբերէր նախորդ տարիներուն համոր պատրաստուած Ելմտացոյցերէն :

Ոչ նուազ կարեւորութիւն առած էր Ազգային ուղղակի տրոց ինդիքն ալ, որոյ նկատմամբ վերջին անդամ Երեսփոխանական ժողովոյ կողմէ քուէարկեալ կանոնագիրն գործադրութեան դընելու և Ազգային տրոց հաւաքումն ըն-

դարձակելու համար թէեւ անդրդուելի յարատեւութեամբ ամեն ֆանք ՚ի գործ գրուած, Պատրիարքարանի կողմէ թաղ. Խորհուրդոց ամեն դիւրութիւն ընդայուած և կարեւոր եղած հրահանդներն հաղորդուած էին, սակայն ծնտես. Խորհուրդներն չ'գտան թաղերէն այն օժանդակութիւնն. որու կարօտ էր տրոց կանոնագրին գործադրութիւնն, և քառամեայ երկար միջոցի մէջ հաղիւ և թաղեր կրցան աւարտուել իրենց աշխատութիւններն, և այն ալ այնպիսի բաշխման թերթի ցուցակներ ներկայացնելով, ուր տըրոց բաժիններն նախկին տրոց հետեւեալ գագամմբ նուազադոյն քանակութեամբ և անհաւասար համեմատութեամբ սահմանուած էին ՚ի մնաս կեդր, սնտուկին, իսկ մնացեալ թաղական Խորհուրդներն և ոչ իսկ կրցեն ձեռնաբարկել ՚ի գործ, և այսպէս ոչ հին դրութեամբ տրոց հաւաքումը կրցաւ կատարուիլ և ոչ կանոնագիրը կարելի եղաւ գործադրութեան դնել, որով կեդր. սնտուկը զլիկուեցաւ ներկայ տարւոյ հասոյթէն և սաստկացաւ իւր գրամական անձկութիւնն, վասըն զի ՚ի հաշիւ անցեալ տարւոյ 5,045 զրշի. գումար մը միայն հաւաքուած էր թաղերուն ձեռամբ :

Հետեւաբար ծնտես. Խորհուրդս չ'էր կրնար աւելի գումար մը ենթագըրելի իւր Ելմտացոյցին մէջ՝ վասն զի խախտած էր դամնաման եղանակն, և հաւանական գումար մը ենթագըրելով՝ անցուց Ելմտացոյցին մէջ՝ միւս կողմէ հաւանութեամբ Պատ. Ժողովը գործադրութիւնն և ըստ առաջնոյն սկսաւ շարունակել տրոց հաւաքումն ներկայ 1883—84

տարիէն եւս , ցնոր անօրէնութիւն , ինչպէս գանձուած էր արդէն ջրոց կանոնագրին գործադրութեան թուակէնէն յետոյ երեք տարիներ ,

Խորհուրդն այս բացադրութիւններն աւլով հարկ կը համարի առաջարկել նաեւ որ , յառաջիկայ տարւոյ մէջ եւս կեդր . տուրքն հին գրութեամբ գանձուելու արտօնութիւն չնորհուի , նկատելով որ հակառակ Ազգ՝ Վարչութեան ջանից և բաղմաթիւ փորձերուն տակաւ . վին ժամանակի մը համար կարելի չափետի լինի արց կանոնագրին սնթերի գործադրութիւնը տեսնել , և ինչպէս փորձով տեսնուեցաւ , մեծապէս վնասակար պիտի ըլլայ զայն գործադրելու յօւսով յառաջիկայ տարւոյ մէջ խափանել տըրոց դանձումն ըստ հին գրութեան . և նոյն կանոնագրից գործադրութեան գընել առանց կարեւոր եղած բարեկուխումներն սահմանելու , բարեփոխմունք . որոց նպատակը պիտի ըլլայ կանոնագրին գործադրութիւնն և արդինքն ապահովել , և զայն սահմանելու համար թէն Թաղ . Խորհուրդներն հրահրուած են յատուկ շրջաբերականու իրենց գիտողութիւններն և կարծիքը ներկայացնելու , սակայն դեռ պատասխաններն չեն հաւասար . և հետեւարար հարկ չէ ըստել թէ , յառաջիկայ տարիները բաւական չզիտի լինին լրացնելու համար գործն , և երբ արց հաւաքումը վերստին դադրի , կեդրոնական սնտուկին դրամական նեղութիւնն աւելի պիտի սաստիանայ :

Մասմք որդիական յարդանօք

՚ ՚ դիմաց Տնտես . Խորհրդոյ

Առենապահ Վ . Առենապետ

Մ . Զապահեան Յ . Եկմէնիմեան

19 Յունիս 1884

Կ. Պօիս

(Յէտ ընթերցնա)

ԴԱՅԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ — ինչպէս կը յիշէ Փողով , նախարդ Տնտեսական խորհրդոյ օրով ևս երկու հաջուեցոյցեր ներկայացան ժողովը , որ ըստ օրինի յդեց Համարակալութեան Դիւանի : Առաջի կ'առաջարկեմ՝ որ ներկայացեալ այդ հաջուեցոյցն ևս , հանդերձ իւր յարակից պատշտօնագրերավ յշեմք արդի Համարակալութեան Դիւանի , յանցնարարելով միանդամայն որ իւր նախարդին թով եղած հաջուեցոյցիներն ես ստունդով , հարկ եղած քննութիւններատրէ և արդինքն տեղեկազրէ :

Փողով համարկերպելով Պատարոսեան է . Փէնտիի սոյն առաջարկութեան , ըստ այնու ներկայացեալ հաջուեցոյցն լը լիք առ Համարակալութեան Դիւանն 'ի բնութիւն և 'ի տեղեկադրութիւն :

Բ.

Շարունակութիւն վիճաբանութեան 'ի վերայ Ազգ . Կեդր . Եկմուացոյցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Մեր այսօրուան օրակարգի Բ. խորհրդն է , որպէս գիտէր , « շարունակութիւն վիճաբանութեան 'ի վերայ եւ մըտացոյցի :

Խօսից կորդն նախընթաց նիստէն կը շարունակուի , հետեւարար առաջին խորըն Զօպաննեան է ֆէնտիին է :

ԶՕՊԱՆՆԵԱՆ Մ. ԷՅ . (Անդամ Տնտեսական խորհրդոյ) . — Անցեալ նատին նկատուցոյցի առթիւ մեր Պատ . պատշտօնակից Փափառկան Ստեփան է ֆէնտի դարձեալ իւր ճար-

տասանական տազանդն վայլեցուց դաստիարակութեան խնդրէն տուիթ առնցով և ամեն ձիգ թափեց կարծեցնելու համար թէ՝ արդի Տնտեսական Խորհուրդն եւս իւր Նախորդին նման շուգէր դաստիարակութեան դրամ՝ տալ: Եատ սխուլ է այս կարծիք և մեր մէջ չ'կայ անձ մը որ Կարենայ ժամուկը դաստիարակութեան կարեւորութիւնն :

Փափազեան է Փէջնտի փոխանակ իւր սովորական պերճամասութեամին ողբեր և շանթեր արձակելու, աւելի լու կ'ըներ, եթէ գործնական ճամբար մը ցոյց տար և ըստեր թէ՝ ի՞նչ կերպիւ կարելի է առ ոյդ իրական դարման մը գտնել:

Վարչութեան կողմանէ ներկայացեալ այդ ողբարձի Ելմտացցցին մէջն Դաստիարակութեան և Գաւառական այցելուաց համար զրամ յուսաւ անվարելի է, ես փորձով կրնամ լսել Զեղ զայդ :

Փափաղեան է Փէջնտի, ինքն ալ կը խոստովանի թէ 1878 Ելմտացցը պատրաստուած պահուն, որ 500,000 զրուցի կը յանգեր և ոչ թէ ներկայ Ելմտացցի նման 300,000 զրուցի, այդ երկու ճիշճերուն համար 50,000 ական զրուշի գումարներ սահմանուած էին թէն, բայց և այնպէս մի զանկ իսկ չ'վճարուեցաւ. Ծսել է թէ նոյն ատենն ալ, յ'սումը Պատրիարքարարանի հասոյթը զգալի կերպիւ առաջ էին, չ'է կարելի եղած այդ որոշեալ գումարներն վճարել Դաստիարակութեան և Գաւառական այցելուաց: Ուրեմն ի՞նչպէս կարելի է գումարներ սահմաններ այնպիսի Ելմտացցի մը մէջ, որոյ ընդհանուր գումարն հազիւ իւր նախորդին կիսուն կը հաւասարի :

Փափազեան է Փէջնտի յոյժ կը սխուլի, երբ Պատրիարքարանի 25-30 տարի առաջ ունեցած վիճակն ներկային հետ բազուտելու կելնէ: Երեսն շատ իսկ փոխուած են: Բայց ես ալ իրեն հետ կընդունիմ որ Յանձնաժողովը մը կազմուի ուղղակի Ազգային Ժողովը կազմանէ, քննելու համար թէ զրուած զրերն, եղած ժա-

խուց կը համապատասխանէն թէ ոչ: Կակ զանկ պաշտօնէից թուոյն զէշչման առաջարկին՝ զոյլը իրագուծել ուղենի ներկայ դրութեան մէջ առ այժմ անկարելի կը թալի ինձ:

Արդ, ալէտք է տրոց հաւաքման մասին կատարեալ աղաստութիւն տալ Վարչութեան, և եթէ իրօք ծառայութիւն մը մաստցանել կուզուի դաստիարակութեան խնդրոյն և մը զում տալ անոր, ալէտք է ազգէն տուրքը առնցը միջոցներուն վրայ դրաններ մեր ու շարրաթիւնն, յ'սումէ միայն կրնամ ակնկալել խնդրոյն նպաստաւոր լուծումն: Եւ նո ինձ համար դաստիարակութեան բարեկամն է, որ փախանակ խօսքով շատանազու իրական դարձաներ ցոյց կուտայ:

Զեմ ուզեր Տեղարք Երեւանիւմն, հասութից գանձման մեր ունեցած տկարագութեան վրայ խօսվէ և մահքամանւթեանց իջնել, այլ եթէ հարկ մնի, կրնամ Զեղ բացագրութիւններ տալ:

Այժմ ներկայէր որ մի քանի խօսք եւս ըսմէն Համարակալութեան Դիւտանի կողմանէ ներկայացեալ անցկատդրին նկատմամբ:

Համարակալութեան Դիւտնն կըսէ և Համարակալութեան Պատրիարք Երկու իրաւունքներ կը նման Ելմտացցյն քննելով, անց մահքամանութեանց մէջ հետեւեալ տար և բերութիւնները կը գտնէ: Կը պատասխանեմը թէ՝ արդի Տնաեւու Խորհուրդն իւր շնած Ելմտացցին անցեալ տարւոյ մէջ եղած համարթից և ծախուց վրայ չնած է և ոչ թէ ու է Ելմտացցին հետ բազգանելով, որ ըսեւէն իրականութեան վրայ հիմնելով պատրաստած է:

ԹՈՐՈՍԵԱՆ Տ. Էֆ. — (Ընդմիջելով) Զօսպանեան է Փէջնտի իրը պարզ եւ եափառն թէ ոչ իրը Տնտես, Խորհրդոց անդամ կը խօսի:

ԶՕՊԱՇԵԱՆ Մ. Էֆ. — (Պատասխանելով) իրը Տնտեսական Խորհրդոց անդամ կը խօսի:

(Հարուստիելը) Համարակալութեան Դիւանն կը սէ : « Խնչու համար այժմեան Տնտես . Խոր և Հորդի խայալնելու չնորհն չէ բասթթէ ի՞նչ և Հման վրաց կը գնէ : Կոյ տարրերութիւնն և « թէ մի և նոցն տարօւսն մէջ ներկայացեալ և սոյ երիւ Երմուացոյներուն հասաթից քառ և ներկութեան տարրերութիւնն ի՞նչ պատճառ և ների յառաջ եկոծէ : » Այս տարրերութեան կը պատսախանելու թէ Տնտես . Խորհիր տեղեկադրին մէջ դիտմամբ չէ բացառութ , որպէս զի երրոր Համարակալութեան Դիւանն իրեն զիմէ , յոյնտամ միայն բացադրէ : Խակ գոլով Համարտկալութեան Դիւանի այն հորցման թէ « արդէօք հասութից բանակու և թիւն եւս , նմանն ծախուց բանակութեան և կոմաց ենթարկեալ է , որ ըստ կամս բար և դաւաճի կամ նուալի » : Տնտես . Խորհ. պատճառաբանութիւնն պարդ են , և ինքն պէտք չունէր մի ոտ մի բացատրելու , քանի որ անցեալ տարօւսն ինն ամսեայ ելից և մտից հետշահած էր զայն որ ոչ կամաց ենթարկեալ է և ոչ ուրիշ բանի : Տնտեսական Խորհուրդն զգուշացած է պարտք ընելէ :

Համարակալութեան Դիւանն թիջ մը վերջը կ'ըսէ « Այժմեան Տնտես . Խորհուրդն ի՞նչ « Գիման վրաց արդեօք պաշափ նուազութիւն « կը գնէ . այդ ծախուց մէջ : Միթէ կ'որի թէ : « Եթէ կարեի է , ուրեմն ի՞նչ պատճառաւ « այդ կարելին միշտ ի գործ դրսած չէ , « կամ չ'ուղեր դրսիւլ : իսկ եթէ անկարելի , « խնչպէս ուրիմն կը խօսուանոյ այդ ծախուց « փակել կամ դպացնել նշանակեալ պիտոյք . « ները : » Հօս ալ գարձեալ անցեալ տարուց հասութից և մասնաւորապէս հասութից նուազութեան համար խնայողութիւն ըրած է , քանի որ դրամ չ'կար , ակամայ կարեկութեան զիմած է չանուլով որ ըստ կարելոյն զոյսանէ նշանակեալ պիտոյքնեն : Համարակալութեան Դիւանն առ պէս իլ շարունակէ . « Գոլով գաստիարակութեան և Գոտ և առասկան անցելութեանոց և հավաւութեանոց և նման կենաւախն և այնքան բաշխացեալ ծառ-

« խոց , երկու Ելմասացոյցներն ալ իրարու կը և նմանին , սա տարրերութեամբ որ նստիկին « Տնտես . Խորհուրդն բոլղովին անոնս ըրած ոէ , իսկ այժմեանը հդուարազանձելիք նաև « սուրբի կատավ գէթ այդ պիտոյքները հոգ և գուլ կ'առաջազրէ : ի՞նչ մեծ չնորհ : Ո՞րչափ « գդուարին բան հսկույնել Տնտես . Խորհը և գականաց թէ , զաստիարակութեան և զառ « տուական անցելութեանց կամ Հայուութեանց և ծախքերն ալ նյոյնափ սովիպայական են ան « հրաժենչ են , որչափ իրենք կ'ենթալլիքն « պաշտօնէից թոշակաց ծախքերն են » :

Կը պատսախանելիք . — Եներկոյ Տնտեսական Խորհուրդը տմենէն լւա գիտէ զնահատել գտաստիարակութեան և Գաւառնական անցելուաց կորեւորութիւնն , և բոլղովին անտես չ'ընելու համար յատկացուցած է այդ երեկո ճիշդերուն համար գումարներ՝ թէ և զգացուարագնների , ըսց ոչ անցոյն : Պէտք է գիտանութէ մեր բոլոր հասութից գանձման միջոցը լրկ բարցական է և չ'սանինք իրաւունք ատիկց անդին անցնելու , և ներկայ ժամանակին մէջ այդ բարցական միջոցին ի՞նչ առաջան աղքանցութեան ունենան յայտնի է Զեզ : Ուստի , եթէ Պատ : Համարտկալութեան Դիւանն փոխանակ ի՞նչ մեծ զնորդ բացականչելու , համեմ զէթ մի անզամ մեզ ցոյց տալ այնպիսիք միջոցներ , որպէս կարող ինչը Պատրիարքանան իւր հասութերն գանձմանը , այն առեն իրօք ծառայութիւն մը մատուցած կը լինէր Աղջիկն . . . :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — (Ընդմիջելով) Այդ միջոցներն ցոյց տրուած են :

ԳՈՒՐԳԻԿ Ա. ԷՅ. — Տնտեսական Խորհը ցոյց դործն ի՞նչ է արդէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը խնդրեմ ընդմիջող երեսիրան կիէնտիներէն թողաւ որ Առենտրանն շարունակէ իւր խօսքն :

ԱԼԻՒԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Առ. ատենաբանն) Խոզերմ, շարունակեցէք Զօսպանեան էթէնտի, պիտի առնէք պատասխանն :

ՏՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Չարունակելով) Կ'ըսէի թէ միթէ աւելի օրինական չէ՞ր լինէր գէթ մէկ անգամ նկամացոյցն առնդզվ Վարչութենէն բացատրութիւն ուղուէր թէ ինչո՞ւ այս գումարն այսպահ և այն ինչ գումարն այնչափ դրուած է, և խոնդիրն ի մօտոց քննելով և կարեւոր բացատրութիւններ առնդզվ ըստ այնմ իւր տեղեկազիրն պատրաստէր, որպէս օրէն է ծնել Սահմանադրական Վարչութեանց մէջ : Անհերեւ ճշմարտութիւն մ'էս առ Համարակալութեան Դիմանն ըրդրովին զանց առած է զայս չ'եմ գտներ ի՞նչ նպաստակաւ :

Գալով պաշտօնէից թոշակաց մասին, հարէ չ'եմ նկատեր երկար բացատրութեանց մէջ մոնել : Միայն կ'ըսմէ թէ եթէ որէտք է ունենալ Պատրիարքարան մը, պէտք է նաև անդ գտնուող պաշտօնեայներն ալ ապրեցնել : Եթէ շոգեշարժ մէքինայն շողի չ'ուենենաց չ'արժիր, այնպէս ոլ եթէ պաշտօնեայ չ'ունենամք Պատրիարքարանի մէջ, ըսելէ թէ Պատրիարքարան ալ չ'ենք ունենար . . . :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Առողք յայտնի ճշմարտութիւններ են :

ՏՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Եարունակելով) Կ'սել է թէ ներկայ վիճակի մէջ, եղած հասցեաթըն հազիւ կը բաւէ իւր պիտոցից և կարելի չ'է զեղչել մի գումար, քանի որ դիմացնիս 2200 մլարի պարտը մ'ալ ունիմք որոյ մեծ մուսն նախորդ տարիներէն գոյացած է, և որ այսօրուան ներկայացեալ Հաշուեցոյցէն պիտի տեսնէք :

Վերասմն կ'ըսմէ թէ հարէ է հասոյթից զանձմուն եղանակին վրայ ուշադրութիւն դարձնել և երբ գանձուին առնդք և իրականանան, յայնժամ միայն կարելի է գոյացնել

ամեն ինչ, և ներկայ վիճակի մէջ՝ կը ցաւիմ ըսել նաև որ արգի Նվազացոցի ճշշ գործադրման մասին ևս կասկած ունիմի, եթէ դարձման մը չ'խարհուի : Ուստի պէտք է անփոփոխ կերպի բուէարկել ներկայացեալ Նվազացոցիցն թողարկութիւնն գժուարագանձելի գումարներն գանձելով, յատկացնէ զայն գաստիարակութեան և գաւառական հովառութեան :

Գալով տեղեկագրին վերջին այն ուարակերութեան թէ՝ որչա՞փ գժուար բան հասակընել ննտես, Խորհրդականաց թէ գաւառաւութեան և գաստիարակութեան ևայցն ո, որ պէճնամազ ըսելէ պարզապէս, աւելորդ կը համարիմ քիչ Մ'առաջ ըսած խօսքերէս յետոյ անոնց վրայ աւելի բան մ'ըսել, զի արգէն պատասխանն իւր մէջն է : այլ միայն, ինչպէս նախորդ նստին մէջ ցաւ յայտնեցի, այսօր եւս նոյն ընելով կը գոհանամ :

ԱԾՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսին Համարակախալթեան Դիմանի Առենապետ՝ Ալիքսանեան Մատթէոս է Քիչնոտինն է :

ԱԼԻՒԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Իմ պաշտօնակիցներէ ունանց պէս ճարտարանական լեզու գործածելու վարժ չեմ, սակայն ոլորտի յառնամ ըստ կարի համառաօիք խօսիլ մի քանի կարեւոր կէտերու վրայ :

Կը ցաւիմ որ անցեալ նստին չ'կիցայ ներկայ գտնութիւն յուսազով որ մեր Դիմանի տեղեկարերն, Թրգոսուեան Պօլոս է Քիչնոտին ներկայ կը գտնուի, սակայն նա եւս կարեւոր գործոյ մը պատճառաւ բացակայ գտնուեր է :

Ուցեալ նազի ատենադրութիւնն կարգալով, ցուօք սրտի տեսայ թէ՝ մեր պաշտօնակիցներէն Ձերան Մինաս է Քիչնոտի, Համարակալութեան Դիմանի տեղեկագրին կուսակցական ուղևորութիւն վերաբերած է : Կը ցաւիմ ըսել, որ առաջնին անգամ լինելով, Դիմանի մը կողմանէ օգտակար նպատական պատրաստուած տեղեկագրի մը կ'ուգայ որ փոխանակ գովեստից

ժամոր գիտողութեանց կ'արժանանայ նոյն խակ այնպիսի Երեսափառանաց կողմանէ, որք գասաթ-արակութեան խնդրոյն մէջ մեր Մենառներն մինել կը կարծէինք :

ԶԵՆՍԱ Մ. ԷՖ. — (Պատուախանելով) Դուք էք մեր Մենառներն :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Ուստի Դիւանս այդ ո կուսակցութիւն ողի եւայն » բառերն կը մերժէ և կը վերադարձնէ զայն իւր հեղինակաց :

Համարակալութեան Դիւանն ինչ որ գըրած է իւր տեղեկագրին մէջ, այս ժողովշա կողմանէ տրուած որոշմանց վրայ հիմնելով գըրած է, զի Դաստիարակութեան և Պատուական այցելուաց խնդիրը սատ յուղած են և անոնց կարեւորութիւնն և ամփովականութիւնը Ազգ. ժողովին ճանչուած է:

Արդ, երբ Համարակալութեան Դիւանս տեսաւ որ այդ երկու կարեւոր հիւղերուն զէմ դժուարագանձելի հասոյթներ յատկացուցած են, որով դարձեալ այդ վճարումներն անդորրածորելի պիտի մնան, պարտաւորեցաւ ծանրանու այդ հէտին վրայ, որպէս զի պարտաւորէ զննուեն. Խորհուրդն որ այդ ցոյց տրուած դժուարագանձելի գումարաց գանձմանն համար աշխատի:

Խակ զարդ Տնտես. Խորհրդոյ կողմանն քիչ մ'առաջ եղած այն յայտարարութեան թէ՝ պարտաւոր էինք դիմել և բացատրութիւն խնդրել, կը պատասխանեմ թէ իւր պարտքն էր հրուիրել զմեզ ՚ի խորհրդակցութիւն և թէ մենք պարտաւորեալ չէմք առ Խնդին դիմել...

ԶՊԱՆԵՍԱ Մ. ԷՓ. — (Ընդմիջելով) Այո՛, Համարակալութեան Դիւանն ըստ օրինի պարտաւոր էր գալ և հարկ եղած բացատրութիւնքն առնուլ :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՓ. — (Պատուախանելով) Մենք մեցին Տնտես. Խորհրդ առ մասն վիճակութեան չունի՞ք բնաւ։ [Եաւրունակելով] Դաստիարակութեան և Պատուական այցելուաց կարեւորութեան վրայ երբ կը պարզեցք, թուզ բնաւ չ'կարծոի թէ Պատուարքարանի պաշտոնէութեան զէմ եւիք և թէ մեր նպատակն է զանոնք գորս ձգել Պատուարքարանին ։ քամ լիցի ։ Ես անհամ մը մինելով. 30-40 անձանց ամսական կը ձարեմ, ուր մաս Ազգային բարձրագոյն Կեդրոնատեղին։ Սակայն, ինչպէս քիչ մը առաջ յայտարկեցի գումարմբ ծակացանք այդ էկտին վրայ, որպէս զի իման մը լինի Տնտես. Խորհրդոյ անդամոց և աշխատին գանձել զըժաւարգանձելի գումարէնին :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՓ. — Թուզ դժուարագանձելի գումարներն պաշտօնէից յատկացուին :

ԶՊԱՆԵԱՆ Մ. ԷՓ. — (Պատուախանելով) Պաշտօնեացներն ալ մարդ են, Փափագեան է ֆինտի, և ինձ նման քեզ նման հաց կուտենի :

ԱՏԵՆԱՊԵՏԱ ԷՓ. — Կը հրաւիրեմ Երեափ. է ֆինտիներն չ'ընդմիջել Ատենապան է ֆինտին, եւ ոչ ալ օգնել իրեն :

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՓ. — Այդէն վերջացուցի խօսք, Ատենապետ է ֆինտի :

Եղակացնելով արեմ, կըսեմ թէ Համարակալութեան Դիւանն իւր պարտք կատարած է պատրաստելով և Զեզ ներկայացնելով այն տեղեկագիրն, բայց և այնպէս Փողովդ աղաս է ընդունել կամ ո՛չ իւր տեսութիւններն :

ԶԱՅՆ ՄԸ — Ծափահարութեան արժանի ատենապանութիւն :

ԱԼԻՔՍՍԱՆԵԱՆ Մ. Է.Ֆ. — (Պատասխանելով) Մամահարեցէք զանոնք, որը կը ճխունն Քառարտիկութեան և Գուշական հովուութեանց կարեւորութիւնն :

ԱՐԺԱԿՈՒՆԻ Յ. Է.Ֆ. — (Եթի Երեսփոխան բեմն ելեւն կանոնիվ) Խնդրոյն մէջ մանելէ յառաջ, սլիմի խնդրեմ Պատուարժան պարագաներէներէս որ ներօղական լինին ինձ եւ թոյլ տան որ առանց ընդմիջմանց կարենամ խօսիլ որպէս զի իրը նորեկ ներեափոխան, անվարժ հետեւարար ընմասացութեանց, չը շփոթիմ և կարենամ ամփոփել խորհրդածութիւններս աշխալի մի խնդրոյ վրայ մանաւանդ՝ որ մեր Ազգին համար ամենակենսականն է : Առենաւորութիւնք մեր ազգային պատմութիւնն իր կազմն և անշուշտ իրաւունքս է զգոյշ իմին որ ընդմիջմանց հետեւութեար սիալ խորհրդածութեանց մէջ չ'անկանիմ վի կ'երկնչիմ պատմութենէն, մանաւանդ երբ կոչուած եւ կարծիք յայսմել Նմուտացոյցի առթիւ Դաստիարակութեան վրա :

Տնտեսական Խոհութեան ինքն իսկ կը խօստավանի տարւոյն 24 Մարտ թուակիր աեղեն կադրով թէ՝ և ծախուց մի քանի ճիւղերուն մէջ, զիստուորաքար պաշտօնէնթեան թոշակի ճիւղն մէջ, խնայողութիւն նեղած է անցել լոյն համեմատութեամբ և որ արդէն Մարտէն ՚ի վեր ՚ի դորձ դրուած իսկ է Ազգ Պաղաքական ժառնով հաւանութեամբն ։ լուսել է թէ խնայողութեան տեսակէտով ինչ որ արդէն կարելի եր, ըրած է Վարչութիւնն հետեւաբար ոչ Համարակալութեան Դիւանի եղբակացութեան համեմատ թոշակաց վրայ 20 օ/օ դեղջն կարելի է այցեւա եւ ոչ Փափազեան է փէնտիկի տառաջնից թուոյն վրայ ըրած 20 օ/օ դեղջն տառաջնին :

Եթէ առաջինն կարելի լինէր եւ ընդունէնք, յայնժամ 46000 զրուշի գումար մը ձեռք պիտի բերուիր, որ ինքնին նշանակութիւն ունեցող գումար մէ եւ մեծապէս կը բնար օդնել մեր ծախուց, բայց երկրորդ առա-

ջարկն գործադրելով չ'եմ յուսար թէ առարերութիւնն 1000 կամ 2000 զորուշն աւելի գումարի մը հասնի, եթէ չ'թողու բարոյական վասարի հետքեր եւու :

Վարչութիւնն կա՞րէ միթէ այս չնչին յաւելումն մեր այս մեջ բաղչանքին, ըստ դուդեմ գաստիպարակութեան ինչպէս եւ Գաւառական Հովուութեանց հրապուրիչ խնդրոց, փոքր ինչ մշաւմ տալու :

Մեր դեռ վերջն անգամ Վարչութեան վրայ ունեցած համամիտ վատանութեան արտադրամանէն յետոյ աելորդ կ'ըլայ կարծեմ այս կարգի դիտողութիւններ ընել ։ Արչութիւնը քննադատուն է ծախուց կողմը անտես ըրած համարելով, ինչ որ բնաւ ընդունելու կողմանակիցներին չ'եմ եւ գիտեմ իսկ թէ չկայ այս շրջանս մէջ ոչ ոք որ տարակարծիք զըստնուի այս մասին :

Խնայողութեան հարկն կեզր ։ Խնտու կի արդ դի նեղ վիճակին արդիւնքն լինեն Տնտեսական Խորհուրդն խոստովանած պահուն անշաւշտ ըստ ուղած կը լինի թէ կեզր այլացից չ'է կարելի ։ Թողւով ուրեմն Տնտեսական Խորհրդոյ բացատրել Համարակալութեան Դիւանի տեղեկագրին Ա. Բ. կ'տերն, որը թուանցանական բաղդատութիւնը են, իրը ընդհանուր սկզբունք դիւտեմ սակայն թէ Տնտեսական Խորհրդոյ մըտածին հաշիւներու վրայ չ'է հիմնած իր կ'մըտացացութեան վրայ այս անցելոյն վիրացն առաջնորդուած, ուստի Համարակալութեան Դիւանի այս մասին ըրած զիտողութեանց ողին ըմբռնելու համար հերկ կը լինի լուել Տնտեսա Խորհրդոյ թերահաստ եմ եւ կը տարակուսիմ յաջողութեան մը վրայ, երբ իրականութեան մը հասնելու համար մութ ու անորու ենթագրութեան մը ոյժին հարկը ցոյց արուել ։ Այսպէս ներկայացեալ Արմատացոյցն ստորեւն ըստած է և եթէ հասողներն ամբողջովին գանձուին, այսինքն դժուարապահնելինին, որք կը կազմն 90000 զրուշի գումար մը, կ'սը հին պարտուց

եւ կէսն ալ դաստիարակութեան եւ գաւառական այցելուաց ծախուց կընան յատկացուիլու : Դժուարագանձելին, ըստ իսկ՝ ոչիեւ ըսել է եւ մեր 84-85ի Ելմուացոյցը շ'ունի ասհմանեալ մի գումար, Դպտիարակութեան համար : Այլ ասկայն զնտուեական Խորհուրդն պարսաւելու իրաւունքն չ'եմ տեսներ որ ունենանք, զի չէ թէ նաև կ'անգիտէ դաստիարակութեան եւ հովուութեան օդուաներն, չէ թէ նաև այդ ճիւղերու մշակման թշնամի է եւ չէ հաշտ ըսկըզբամթ, այլ թէ՝ Ելմուացոյցի մէջ որուած այդ ծանօթութեամբ կ'ուղէ իսացնելթէ շ'ունի գումար, այդ ճիւղերուն համար, նշանակեալ հասոյթն իր դէմ ունենալով եղն :

Ելմուացոյցնիս ուրեմն թերի է, քանի որ Եզզաց Ելմուացոյցերն առանց դաստիարակութեան համար մի գոհացուցիչ գումար որոշած ըլլացու, ամբողջացեալ եւ կատարեալ չ'են նկատուիր, որոշ ըսենք, բաց ունինք մեր Ելմուացոյցի մէջ, զի կը պակսին նոր հասոյթք, արդէն պարտաստ երի մը դէմ, որոյ կարեւորութիւնն ու օգուար այնքան մեծ են որ այժմէն իսկ կարելի չ'է որոյ թուանշան մը դնել Սեծ անդունդ մ'է որ կարէ կուլտաւլ մեծափառթամ գանձեր եւ երբէք Տեսարք՝ պարզիւն չ'են այդ ծանսերն, իսկ օգուան համեմատական է :

Այդ պէտքերն այնքան աղդուապէս կը խօսին մեզ՝ ըսեմ կը բոլորքն մեզ դէմ, որ մերթ կը մոռանամք զնող իսկ եւ կ'ուզեմք մինչեւ Պատրիարք, Վարչութիւն, Պատրիարքարան, միով բանիք Եզզ. Կեդրոնական Խիստութիւն ամենքն ալ բառնալ եւ ասոնց յատկացեալ հատոյթներն յատկացնել միմիայն Դպտիարակութեան և հովուութեան :

Մեր Համարակալութեան Դիւմանի տեղեկադրին վրայ պարզ պինարկ մը ձեկ ուղուած պահուն, այդ քրանկացութիւնն կը տեսնեմք պարզապէս այդ է գոյնէ անոր ոգին :

Այնքան եռանդ, ու աշխայդ անշուշտ մուլքուցել են զնաւ բայց ո՞ւր տեսնուած է տասնց հոգւոյ կեանք, եւ ոչ իսկ բնութեան

հրաշակեաց մէջ օրինակն կայ . ի՞նչ նշանակութիւն կարէ ուրեմն ունենալ գաւառական այցելութիւն ու հովուութիւններ, որո՞ւ եւ ի՞նչ նպատակի համար, երբ կեզրոնի մը հրատանգաց եւ ուղղութեանց գործակատարք չ'են . կեդրոն մը որ Ազգին հոգին է . նովաւ կայ Եզզն : Ո՞ր Ազգն է որ չ'ունենայ զգույս ու կեղուն :

Դպտիարակութիւնը ամենահրաժեշտ պէտք մ'է, ամենիք գիտեմք, մանաւանդ որ ներկայիս եւ ապագային մէջ եւս ապրութիւնի միջոցներու նորագոյն յատկութիւնն պահանջում է եւ պիտի պահանջի աւելի խելք բան Ֆիվլիական ոյժ, որով հաց ուտելու համար հարկ կայ պատրաստել եւ զարգացնել այն զօրութիւնն որոյ մարդս աւելի պէտք ունի, այսինքն ՄԻՏՔՆ : Անհանաներն զարգացնել, կրթիլ, զնգդն զօրացնել, յատաշացնել է : Դպտիարակութեան արդեանց մասին կը թողում խօսիլ Տօրթ . Տայց . Պատի Մեծ Դրսութեան վաճառականական Տնօրէնն, որ թէ ո՞յց եղան հորկեցուցիչ Դպտիարակութեան արդիւնքն հարցին կը պատասխանէ սապէս . Ներկրին բարոյականն ու հարստութիւնը ճնշուցն, ամսուծութեանց թիւը աւելցաւ, ասպօքն ճնշունքներն նուռեցան եւ բանտերն սկսան պարպուիլ : 1854 ին, 1426 բանտարկեալք կային, մինչդեռ 64 ին 694 ի իջաւ այդ թիւը . գոյութիւնը 1009 էն 460 ի իջան, միւս Կողմանէ երկրին նրաթական բարքաւաճումը հրանալի թիրչ մ'առաւ, տրոց վարման նումար նարկ եղած նրաւերն 2/3 ոլ պակսեցան . աղքատաց թիւն ալ 1/4 շափով նուպեցաւ :

Երբ այս կարգի փորձ անձինչ կը խօսին, աւելորդ կ'ըլլայ մեզ ջանալ ժխամել այսպիսի ճշմարտութիւններն :

«Ազգի մը անկմանն առաջին պատճռուն տգիտուրիւնն է կ'ըսէ Տիւեփոյ եւ դաստիարակութեան ընդհանրացումը միայն կրնակ գործան լինիլ այդ վիճակին, այդ միայն կրնայ

ապահովագոյն դործիքն լինել վերածննդեան» Տեսէք Տեարք, ի՞նչ կ'ըսէ Փարիզի երթական Խմբին գործադիր ժողովոյ գլխաւոր անդամներէն Պ. Լըռզպոլէ : Ընկերութեան կազմակերպութեանն առթիւ խօսածմէկ ճառին մէջ :

Ղեթէ 1870 ի պատերազմը մեզ խիստ մահաբեր եղաւ, և մէջ անկումն չարչաչը, պատճառն այն էր որ մեր ունեցանք մեր դէմ ա՞յնպիսի թշնամիներ որոց դինաւորական առաւելութեանը միացած էր իր, առաւելուրինն : Գերմանիայ եւս այս օրինակ չարչաչը անկումներէ վերջը, իր արդի մեծութեան դիմաւոր միջոցն կրցաւ գտնել ո ժողովրդային դաստիարակութեան ընդհանուր ժաւագման մէջ : Այսպիս է իսս դար ժամանակակիցնց նուազ շրջանի մէջ, նուազած, թագակորցյա մը ժողովրդուր, եւզաւ մի ազգ, արի, կրթեալ ամեն ծիւզի մէջ եւ կարող իսկ յաղթելու :

Մինաս Զերազ է Քիչնոտի, իրաւունք ունէր բազզատել մեր ազգային վիճակն մեզ ծանօթ եւ համակրեփ ազգի մը կետնքին եւ կացութեանն հետ :

Անհերելի կը լինի անշուշտ դատասպարտել զանոնք որք դաստիարակութեան պէտքն զգալով՝ կ'ուղեն զայն մեր Ազգին մէջ տարածեալ, ընդհանրացեալ տեսնել, բայց արհամարտնք, սրտնեղութիւն, գդզուութիւն արդիւնք չին արտազրեր, ամենինիս զոհ լինինք եւ քաղաքակրթեալ Ազգեր թող տեսնեն մեր այս վիճակի մէջ ո՞րքան եռանդով կը տեսնջանք համնելու այդ բարեցն, թէ յետիններէն չենք գնիէ այդ ընդհանուր շարժման առջեւ, թէ գիտենք եւ կուզենք սերտել իրենց կեանքն օգտաւելու համար եւ մենք այդ սույնութեան նորու հջորդ աւագը :

Փարիզի Արթագրան Խմբին հասնաւման առ Թիւ Պ. Փիւլ Սիմոն 1870 Մարտ 8 ին այսպիս ու Առաքեր առանախազահն այդ կազմութեան:

Անսա Ձի տարիի եւ աւելի է որ կ'աշխատիմ կրթութիւնն հարկեցուցիչ ընել ի Ֆրանսաւ, ինչպէս է ներուպից կարգ մը երկիր-

ներու մէջ, դիմաւորապէս Բրուորոյ մէջ բարեկամն Պ. Գառնի 1848 ին առաջարկած էր օրինաց մի ծրագիր այս սկզբմամբ, բայց չը յաջողեցաւ եւ Հասարակապետութիւնն այնքան ազքատ էր որ ըլ համարձակեցաւ խնդրել 30 միլիոնի դուսութիւն մը . Երբ 1863 ին Օրէնսդրական մարմանոց անդամ եղայ, իմ առաջին պարտականութիւնն նկատեցի Ժողովոյ մէջ պաշտպանելայց կարծիքն, բայց անշուշտ կը յիշէք որ այդ ժողովը հազիւ ուղեց լսել զիս : Ամեն տարի անշնչդհատ կ'սկսէի եւ սակաւ առ սակաւ ունեցաւ համակարծիքներ : Պ. Տիւոփ, որ գաղափարակից էր ինձ հետ, հոչակից այս գաղափարն, բայց Խորհրդարանն, օրոյ մէջ անդամ էր ինքն եւս, ըլ պաշտպանոց զայն : Այժմ բարձրակապէս կ'անդիտեմ թէ ի՞նչ չափով պիտի գտնէք յաջողութիւն : Դարձեալ Պ. Փիւլ Սիմոն 1872 ին Սուպոնի մէջ ըրած մի նշանաւոր բանախօսութեան մէջ զրեթէ ուղացած է իր հայրենաց Մատենացարաններու : Թանգարաններու, ընական եւ ասրալութական զիտութեանց Նշանաւոր կաց անբաւական վիճական դրայ . Եցոյ տալով միանգ ամայն թէ Տուանայ 1872 ին ծախսած է ընդամենը 86.311 Գրանդ իր Գրական, Գիտական, իրաւունական եւ Բժշկական բարձրագործ վարժարանաց համար » :

Սա անշուշտ բնական հետեւութիւնն է 1870 ի պատերազմին :

Տեարք պատուականք, երբ յառաջ կը բերեմ այսպիսի իրուզութիւններ, գարուս հրաշկաւոր մարդոց, իշխանութեանց բերնէն ելած խօսերն, նպատակ է խրախուսել զանոնք որք լաւասես չ'են այլ յուսահատ:

Նպատակիս է ցոյց տալ թէ ասկից գետ կ'տարի յասաշ ֆանասի նման երկիր մը մէջ առտունջ կար կրթական գործին յետամիաց վիճակին համար, նպատակ է վերջապէս ցոյց տալ թէ հանգամանքներն եւս օգտնելու են որ կարելի լինի իշխափութիւն ապատուկ:

ներն : Առ գիտէ՞ք աեւաբք՝ թէ կը յաջողուեցան այս ազգեր, երբ օրէնք քուէ արկեցաւ թէ՝ և կրուրիմնն հարկեցուցիչ պիար է լինի . » 1848 ին Պատի Մեծ Դրսովմեան մէջ 48 % կարգալ գրել է գիտողող կը հաջուէին . իսկ կրթութեան հարկեցուցիչ օրինաց հասաստմանն է, վրայը այդ համեմատման միջնը իշխամինչ 0% ին 2 կամ 3 :

